նայն թիւնաւոր կենդանի կարի լինիլ թագաւոր քոյ, ոչ այսպէս այլ հարկաւոր է մեզ մեռանիլ ազատ և պատրաստիլ վասն մեր կեանս յաւիտենականս քանթէ կալով մնալ կենդանի մարմնով 'ի կեանս անկարգութեամբ և ծառայութեամբ և պատրաստիլ 'ի հանգերձելումն վախճան յաւիտենական. քանզի անասունք ևս ոչ ընդունին 'ի մէջ վարուց իւրեանց ոմն ինքնակալ և ինքնակամ իշխանութեամբ հրամայել 'ի վերայ իւրեանց, ուրեմն որքան ամօթանք 'ի վերայ բանական բնութեան մերոյ լինիցի զի հնազանդիցուք մեք 'ի առն ումեք ըստ նմանութեան և բնութեան մերոյ, զի ինքնակամ բանիւ հրամայեսցէ 'ի վերայ մեր, այլ եթէ գուցէ ընդունիս ինքնակամ հրամանի 'ի վերայ քոյ 'ի կնոջէ պոռնկէ կարի պատճառն գարշելի ցանկութեան, բղջախոհութեան բնութեան քոյ լինիցի, և եթէ ընդունիս կամս ինքնակալի 'ի գինածախէ պատճառն մոլեգնեալ կամաց արբեցութեան քոյ լինիցի, այլ համանգամայն 'ի զօրութենէ բանական հոգւոյ ծանեալ մոլութիւնն քոյ պարտիս զղջանալ զի գործ քոյ չար է և աւերիչ պատուական ազատութեան քոյ, հարկաւոր է քեզ ըստ բնութեան բանական մարդոյ հետ կատարելով ցանկութիւն սրտի և արբեցութեան քոյ լրջանալով զղջասցես և արասցես քեզ սահման անշարժ ուղղելոյ վաղթաբ յանցանաց քոց, զի